Ե. ՓԱՐԻԶԵԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ 1855 ԱՄԻՆ Ի ՅՈՒՆՈՒԱՐԷ Ի ՅՈՒՆԻՍ

ՅՈՒՆՈՒԱՐ

7. Իշխանն Կորչաքով պատգամաւոր Ռուսաց ի Վենետիկ, յայտ առնէ զի ունի իշխանութիւն բանագնաց լինելոյ ընդ դեսպան արեւմտեայ պետութեանց ի վերայ չորից խնդրոց՝ զայս օրինակ մեկնաբանելով զնոսին. Ա, Բարձումն պաշտպանութեան զոր կամիին Ռուսք միայնակ վարել իվերայ Մոլտաւիոյ եւ Վալաքիոյ. — Բ, Ազատութիւն նաւարկութեան ընդ Դանուբ՝ ըստ պայմանացն հաստատելոց ի բազաւորացն ժողովոյ ի Վենետիկ (յամին 1815). — Գ, Վերստին քննութիւն դաշնագրոյն որ յ13 յուլիսի 1841, այնպէս զի պանպանութեամբ օսմանեան պետութեան առաւել եւս անդրդուելի մնասցէ եւրոպականն զուգակշռութիւն. — Դ, Միաբան երաշխաւորութիւն հնգեցուն պետութեանց վասն անեղծ պանպանութեան կրօնական ազատութեան այլ եւ այլ ազգաց քրիստոնէից յԱրեւելս:

15. Յայտարարութիւն պետութեանցն Գաղղիոյ եւ Անգղիոյ՝ երբ նաւանանգիստք Ռուսաց որ ի Պոնտոս եւ ի ծովին Ազովու՝ փակեսցին նաւատորմօք երկուցն ի 1 փետրուարի:

23. Բացումն խորհրդարանին Անգղիոյ. յորում ի բողոքոյ եւ պարսաւանաց ընդդեմ ոստիկանաց պատերազմին՝ Լորտ Ճոն Ռըսըլ հրաժարէ յիշխանութենէն:

25. Ճոն Ռօսլըք անդամ խորհրդարանին Անգղիացւոց՝ առաջի առնէ խորհրդականաց բնութիւն առնել հանգամանաց անգղիական զօրացն որ ի Սեվաստոպոլ:

26. Հաստատութիւն ուխտի դաշանց նիզակակցութեան պետութեան Սարտենիոյ ընդ արեւմտեայս, միանգամայն եւ խոստումն յղելոյ ի Խրիմ զօրականս 15,000 փիեմոնթեցիս՝ ընդ ձեռամբ Ալփոնսոսի տէրտ Մարմորա: — Փոխ միլիոնի միոյ անգղիական լիրայից (որ է Ֆրանք 25 միլիոն) խոստացեալ Սարտենիոյ յԱնգղիացւոցն պետութենէն:

ՓԵՏՐՈՒԱՐ

1. Մահ Խոսրով փաշայի ի Կոստանդնուպոլիս ի հասակի 95 ամաց:

6. Էօմէր փաշա մեկնի ի Վառնայէ զնալ ի Խրիմ:

10. Յայտարարութիւն Նիկողայոսի կայսեր Ռուսաց վասն գրելոյ ի զինուորութիւն զմասն ինչ ժողովրդեան:

17. Զօրավարն Ռուսաց Խրուլեվ բանն եւ հինգ հազարաւ յարձակեալ յառումն Կեօզլեվի՝ յետ հնգից ժամուց պատերազմի վանի ի Տաճկաց, կորուսեալ յիւրոցն արս 500: Իսկ ի զօրավարացն Օսմանեանց ի մահ վիրաւորին Սելիմ փաշա եւ Բիւսրեմ Պէյ:

21. Հաստատութիւն դաշին վաճառականութեան կռելոյ ընդ Միացեալ Նահանգս Ամերիկոյ եւ ընդ ինքնակալին Ճավոնի:

23. Կաւս ջափազետ եւ աստեղաբաշխ գերմանացի մեռանի ի Կերինկեն քաղաքի:

24. Զօրավարն Գաղղիացւոց Մոնեւ յարձակեալ իւրովքն ի մարտկոցն կանգնեալ ի Ռուսաց հանդէպ Մալաքովի՝ ի բաց վանի վիրաւորեալ:

27. Խորհրդարանն Կրանատայի յԱմերիկա՝ հաստատէ զինքնիշխանութիւն պետութեան Փանամայի յորում են գաւառքս Փանամա, Ազուերոյ, Վերակուաս եւ Չիրիքի, եւ բնակիչք 144,000:

28. Սասանութիւնք ի Պրուսա, ի Կոստանդնուպոլիս եւ յայլ բազում վայրս:

ՄԱՐՏ

2. Մահ կայսերն Ռուսաց Նիկողայոսի Ա, որում յաջորդէ որդի նորա Աղեքսանդր Բ:

4. Յայտարարութիւն մարտի բազաւորին Սարտենիոյ ընդդեմ Ռուսաց:

15. Սկիզբն բանագնացութեանց դեսպանացն ի Վենետիկ ի խնդիր հաշտութեան:

— Դաշնակցութիւն բազաւորին Սարտենիոյ ընդ Օսմանեան դրանն:

21. Շապէռ վերջին դեսպան բազաւորութեան Լեհաց ի Կոստանդնուպոլիս՝ մեռանի անդանօր ի հասակի 84 ամաց:

22. Ռուսք հնգետասան հազար յարձակին ի վերայ աջոյ թեւի դաշնակցաց հանդեպ դղեկին Մալաքովի, եւ ի բաց վանին սաստկապես:

27. Լաբրբրեի՝ երիցագոյնն հասակաւ ի ճեմականս Կանառոյ գաղղիականին վախճանի մերձ ի Մարսն:

ԱՊՐԻԼ.

2. Իշխանն Կորչաքով անուանի հրամանատար զօրացն Ռուսաց ի Խրիմ:

6. Գիւտ նորոյ մոյորակի, որ կոչեցաւ Կիրկէ, ի ձեռն Շաքոռնաք աստեղագիտին Գաղղիացւոց ի Փարիզեան դիտարանէն:

9. Սկիզբն վերստին ռմբակոծելոյ դաշնակցաց զՍեվասթոփոլ, յորում զօրավարն Գաղղիացւոց Պիզոյ վիրաւորեալ՝ մեռանի յետ աւուրց:

10. Խռովութիւն ի Մատրիտ:

11. Դարձեալ սասանութիւնք ի Զմիւռնա եւ ի Կոստանդնուպոլիս:

15. Ուղեւորել Կայսեր եւ Կայսրուհւոյն Գաղղիացւոց ի Լոնտոն. ի վաղիւ անդր հասանեն ի Ուինզոր, եւ ի 22 ամսոյն դարձ առնեն ի Փարիզ:

18. Ոստիկանն Աւստրիոյ Պուլ առաջի առնէ դեսպանացն ժողովոյ իբրու հնարս հաշտութեան, — Ա, Եբաշխաւորութիւն ամբողջ պանպանութեան Օսմանեան երկրին ի դիմաց ամենայն պետութեանցն դաշնակցելոց միանգամայն. — Բ, ի Սեաւ ծովուն ջափդնել ծովային զօրութեան Ռուսացն եւ այլոց. — Գ, Նուազել զնաւս Ռուսաց ըստ բուոյ նոցին որ յառաջ քան զպատերազմն:

19. Գիւտ նորոյ մոյորակի (որ երեսներորդ հինգերորդ է) ի ձեռն Լուբեր աստեղաբաշխի ի դիտարանէն Տիւսելտորֆ քաղաքի Բրուսիոյ:

20. Առաջարկութիւն ի խորհրդարանին Անգղիոյ՝ վասն առնլոյ ի փոխ լիրայս 16 միլիոն ի պետս ծախուց պատերազմին. որ եւ հաստատի ի 24 ամսոյն:

26. Դադարումն բամնագնացութեանց դեսպանացն ի Վենետիկ՝ առանց գտանելոյ զնարս հաշտութեան:

27. Խորհրդարանք Սպանիացւոց սահմանեն զվճռառումն եկեղեցական ատացուածոց:

28. Փիանորի անուն ոմն յարձակեալ ի վերայ Կայսերն Գաղղիացւոց առազակօրէն՝ ձերբակալ լինի, եւ գլխատի յետ աւուրց հնգետասանից:

ՄԱՅԻՍ

1. Բորբոնումն Վեսուվի հրաբուղխ լերին:

6. Նոր զօրաժողով ի Ռուսաստան (12 այր ի հազարաց):

9. Հրաման զինուորագրութեան յամենայն ազգաց հպատակելոց օսմանեան պետութեանն անխտիր՝ հրատարակեալ ի Կոստանդնուպոլիս:

10. Բարձումն մենաստանաց մուրացիկ կրօնաւորաց յաշխարհն տերութեանն Սարտենիոյ վճռով ծերակուտին:

15. Բացումն համաշխարհական Արուեստանոցիսին ի Փարիզ:

16. Զօրավարն Քանրոպէռ եւանն ի սպարապետութեան պաշտամանն, եւ յաջորդ նմին զօրավարն Փելիսիէ յառաջնորդութեան բանակին Գաղղիացւոց որ ի Խրիմ:

25. Դաշնակիցքն առնուն զԿերչ եւ զԵնիքալէ. եւ ի 28 ամսոյն ռմբակոծեն զՃինիչկէ, եւ հրդեհեն զնաւս Ռուսաց վանդաղաշան ի ծովին Ազովու:

28. Ռուսք ի բաց գնան ի Սուճուգ-Գալէ ամրոցէն որ ի ծովեզերին Պոնտոսի, եւ յ8 յունիսի յԱնապայէ:

— Դարձեալ սասանութիւն ի Պրուսա:

30. Մահ Ահմէտ փաշայի Իշխանին Թունուզի, որում յաջորդ եղբօրորդին իւր Մուհամմէտ Պէյ:

ՅՈՒՆԻՍ

3. Դաշնակիցքն ռմբակոծեն զԹայդան քաղաք, որ է Թականրոկ:

7. Առումն Կանաչ սարին ի Գաղղիացւոց առ Սեվասթոփոլիս:

18. Յետ ռմբակոծելոյ ժամս բառասուն եւ ութ զղեկակն Մալաքով՝ յարձակին դաշնակիցքն յառումն նորին, եւ յետս ի բաց վանին անագին կոտորածիս:

28. Սպարապետ Անգղիական բանակին Լորտ Ռագլանն մեռանի առ Սեվասթոփոլ քաղաքաւ, եւ յաջորդ ի տեղի նորա զօրավարն Սիմսընն: